ԼՂԻՄ. ՎԱԳՈՆՆԵՐ ԳԱԼԻՍ ԵՆ, ԲԱՅՑ...

Ադրբեջանի կողմից դեպի մարզ տանող միակ երկաթգծի շրջափակման պատճառած երկարատև անգործությունից հետո վերստին աշխուժացել է Ստեփանակերտի երկաթուղային կայարանը: Այստեղ ընկալել են աստիճանաբար շարժակազմեր ստացվել տարբեր ժողովրդատնտեսական բեռներով: Այսպես, հոկտեմբերի 16-ին մարզը ստացել է 15 ցիստեռն վառելիք, որից 10-ը դիզելային վառելիք, իսկ 5-ը՝ բենզին: Սակայն դեռ վաղ է լավատեսական հետևություններ անելու համար, քանզի այդ պաշարը կբավականացնի ընդամենը 2—3 օր:

Ղարաբաղի արտադրության աշխատողների երկյուղներն սկսեցին արդարանալ: Հաջորդ օրը քաղաքում ստացված երկու շարժակազմերում չկար վառելիքի ոչ մի ցիստեռն: Վագոնները հիմնականում բեռնված են շինանյութերով: Որպես կանոն, վագոնները հազվադեպ են հասցեատերերին հասնում անխաթար վիճակում:

Հարկ է նշել, որ սեպտեմբերի սկզբից հանրապետությունը ինքնավար մարզ բաց չի թողել պարենով բեռնված ոչ մի վագոն: ԼՂԻՄ-ի համար նախատեսված ալյուրը, շաքարը, պահածոները, մյուս մթերքները, գտնվելով Լեռնային Ղարաբաղի սահմաններից դուրս, շարունակում են օգտագործվել որպես Արցախի վրա տնտեսական ճնշման միջոց, նպատակ ունենալով Արցախի ժողովրդին ստիպել հրաժարվելու Հայաստանի հետ վերամիավորման քաղաքական պայքարից:

Վառելիքի սուր պակասը բացասաբար է ազդում բեռնաթափման աշխատանքների վրա: Օրինակ, հոկտեմբերի 17-ին բեռնաթափվել է միայն 21 վագոն: Այնպես որ, մարզի շրջափակման վերացման մասին խոսելը վաղ է, մանավանդ որ ավտոճանապարհների ապաշրջափակման մասին չգիտես ինչու չեն էլ հիշում:

Ստեղծված իրավիճակը քննարկվեց կուսակցության Ստեփանակերտի քաղաքային կոմիտեում կայացած հատուկ խորհրդակցությունում: Դրա մասնակիցները անհետաձգելի միջոցներ նախատեսեցին բնակչության պարենավորման ապահովումը հնարավորության սահմաններում առավելագույնս կարգավորելու, ստացվող բեռները օպերատիվորեն վերամշակելու, ավտոտրանսպորտային միջոցները նպատակահարմար օգտագործելու համար:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)